

3599

619
h-35

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿ ՍՆ

ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ե Ի

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԺՅԿԱՐԱՆ

ԴԵՂՕՐԱՅՔ (ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Գ Ր Ե Ց

ՄԻՍԼՔ ԽԱՐԱԽԱՆ

ՀԵՌՈՒՆՈՂՈՒՔԻԱՄԲԻ

ՓՈՕՅԷՍԷՕՐ Ս. ՍԱՆՍՕՆԻ

ԹԱՄԻԷ--ՖԱՅՈՒՄ

(ԳԵՐԻՆ ԵՂԻՊՈՏՈՍ)



ՅՊԱՐԱՆ ՕՆՆԻԿ ՀԱԼԷՊԼԵԱՆ
որն Գարագոլին մօտ

Գ Ա Հ Ի Ր Է

1907

619

m-38

610
109-ԽԱ

119
Խ-38 ա

2.147

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ

ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ե Ի

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԺՅԱՐԱՆ

ԴԵՂՕՐԱՅՔ (ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ)




Գ Ր Ե Ց

ՄԻՍՏՔ ԽԱՐԱԲԱՆ

Հետևողութեամբ

ՓՈՑՖԷՍԷՐ Ա. ՍՈՆՍՈՆԻ

96



ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ՕՆՆԻԿ ՀԱՎԷՊԼԵԱՆ

Ապրիլի Գաղափարի մաս

Գ Մ Հ Ի Բ Է

1907

1003
10205

16618

2002

ՆԵՐՍԵՐՈՒԹՅՈՒՆ

Կենդանիի մը բնական առողջութիւն

Կենդանի մը առողջ է այն ժամանակ, երբ կուտէ, կը խմէ, կը քալէ ու կ'աշխատի: Բարեբաղդաբար կենդանիներու կեանքը շատ պարզ է և զիմացկուն: Մարդկային նահապետական կեանքն ալ աւելի առողջ և զիմացկուն էր քան ներկայիս, որ գնալով փափկանում և հետեւաբար կորցնում է իւր ֆիզիքական զիմացկունութիւնը և դառնում է աւելի և աւելի նեարգային: Այս գործի մէջ մննդառութիւնը մեծ դեր ունի: Անատոմների կեանքն ալ թէև այս էվոլիցիական փոփոխման է ենթարկուած, սակայն, մի քիչ նուազ չափով և բարեբաղդութիւնը այն տեղ է, որ այն երկիրներում, ուր կենդանական դասակարգերը կամ տեսակները սկսում են հետզհետէ աղնուսնալ և բարեփոխուել, միանգամայն այդ երկիրներում գիւղատնտեսական տրուեստ և անասնաբուժութիւնն ալ համեմատական չափերով կը յառաջանայ:

Ինչպէս որ կենդանին իւր բնական վիճակում առողջ և զօրաւոր է, աշխատելու է, աւելի զայն իւր բնական վիճակում աղնուսնալ և զօրացնել նաեւ ֆիզիքապէս. չափազանց անլարժ և անյարմար խնամքն ևս կենդանիին կը դարձնեն թուլ, ջգային և անընդունակ աշխատանքին:

Կենդանական բնաղբը անբուական է գիրենք պաշտպանելու, ամեն տեսակ վտանգների և հիւանդութիւնների դէմ: Մեր սէպուհ պարտականութիւնն է կենդանիներին պաշտպանել ինչպէս մեր հարազատ երկխաններին, որ լեզու և կատարեալ զիտակցութիւն չունենալուն չեն կարող զիմպրաւել ամեն զժրողութեանց և հիւանդութեանց: Սրա համար մեզ ուշադրութիւնը՝ նախ պիտի դարձնենք կենդանեաց բնակարաններին վրայ:

Ժամանակակից գիտութիւնը և տարվիճիզմը հաստատել են որ իրաւունքը հզօրագոյնին է ։ Բնութեան մէջ ուժեղը, անուժին կուլ է տալիս ։ Կը տեսնէ՛ք , մեծ ձուկը կը մնանի բացառապէս մանր ձուկերով ։ Բոլոր կենդանական և բուսական թագաւորութիւնները ենթարկուած են ընդ թեան այդ մեծ և անփոփոխելի օրինաց ։ Բնութեան մէջ ուժեղ ըսածը չը պէտք է հասկնալ սակայն , միայն հաստատով կամ կենդանական դասակարգով մեծ ։ Ճիշտ է որ , մեծ ձուկը փոքրերին կուլ կ'ուտայ , սակայն , քիչ չի պատահիր որ փոքրերի մի ընկերակցութիւնը կոծօտելով մեծ ձուկի կողքերից ու կողերից , նրան զիակ կը դարձնեն և գետին կը տապալեն ։ Իսկ անկուշտ , չարաճճի մի քրոք ներքի և պարագի տների , այս տեսակէտով գործած աւերմունքները , ամենուն յայտնի է ։ Կա՞յ մի վէ՛րք , մի հիւանդութիւն կամ մի ցաւ որ , մի քրոք կամ պարագի տը գործ չ'ունենան մէջ ։ Դժուար է ասել ո՛չ ։

Կեսնքի , գոյութեան կռուի այս ընդհանուր փրօպէմի մէջ , ամենէն դժուար գործը՝ ի հարկ է բուսային թագաւորութիւնից յետոյ , կենդանեաց կամ անասունների կեանքն է ։ Վերցրէ՛ք մի պարտէզ՝ և կը տեսնէ՛ք թէ այն տեղ , պարտիզականին որ աստիճան դժուար է , իւր ցանկացած պտուղները և բանջարեղէնները հասցնելու ։ Բաւական չէ միայն զիտնալ օգտուիլ ժամանակից , եղանակից , հողից , ջուրից և արեւից , այլ և պէտք է զիտնալ՝ զիտակսն միջոցներով , կռուիլ բոլոր երեւելի և աներևոյթ մի քրոքային և պարագի տ հիւանդութիւնների դէմ , որ քնալով կ'աճին ու կը բազմանան ։ Նայեցէք ձեր սենեակը , ձեր ընակարանը կամ տունը տեղը կամ ո՛ւր որ է՛ք — վերջա-

պէ՛ս , մի քանի օր իրարու վրայ , եթէ կարող էք , մի աւելէ՛ք , մի մաքրէ՛ք , մի բանա՛ք լուսամուտները ու դռներն և երթիկները , մի թողուք որ օդը փոխուի , և ահա պիտի տեսնէ՛ք , թէ ի՞նչպէս ձեզ պիտի չըջապատեն անթիւ ու անհամար միւրոքների , միջասների ու սարգի-ստայանների բանակները : այնպէ՛ս ի՞նչպէս դուք լի-նէիք կատարելապէս սրտերազմի դաշտի վրայ • կոխ և կոխ և կոխ : Ամե՛ն տեղ ու ամե՛ն ժամանակ կոխ է պէտք և ապրի՛ր եթէ կարող ե՛ս , եթէ ուժեղ ե՛ս քո շրջապատի միջավայրից :

Մի և նոյն աւելի ցաւալի և աւելի մոռացուած և անհոգս վիճակի ենթակայ չե՞ն արդեօ՛ք , մեր անակա՛ն անասուններն ու կենդանիները • որոց մասին ահա մենք այս փոքրիկ գրքովիւ կ'ուզենք ծանրանալ և գէթ մի քանի՛նս մասօտ գլուխներով բացատրել մեր երկրագործ ժողովրդին թէ՛ ի՞նչ է կենդանեաց առողջապահութիւնը և ի՞նչպէս կուրելի է խնամել և դարմանել հիւանդ անասունները :

ՄԻՍՍ.Բ ԽՍ.ԲՍ.ԽՍ.Ն

27 Նոյեմբեր 1906

ԹԱՄԻԷ-ՖԱՅՈՒՄ

ԳԼՈՒԽ Ա.

ԲՆԱԿԱՐԱՆ

Հայ , ջուր և հանգստութիւն , ահա կենդանական օրկանիզմի առողջապահութեան յենակէտը : Մտունդ և ջուր թէև իսկապէս կենդանիի մը գոյութեան էական , հրամայողական հարցերն են , այսինքն՝ առանց որոնց կենդանին գոյութիւն իսկ չի կարող ունենալ , բայց որովհետև այստեղ մեր նպատակն է , աւելի զիւղատեսիս ժողովրդին ցոյց տալ կենդանիների համար առողջապահական միջոցներ , ուստի նախընտրելի է ուսումնասիրութիւնը սկսիլ բնական բաներից : Կենդանեաց բնակարանի համար ի հարկ է ախ դարդարանք (toilette) հարկաւոր չէ , բաւական է կենդանիի տակ լինի չոր և մաքուր , լուսամուտները նայած տեղւոյն , կլիմային լինին մեծ և օդաւէտ : Մարդիկ միայն հոցով չ'են սպրում , այլ Աստուծոյ խօսքով • Կենդանիներն այլ միայն անունդով չէ որ կ'ապրին այլ և չոր ու մաքուր օդով : Կենդանիներ կան որ կը վարժուին խոնաւ , ցեխոտ և կեղտոտ մթնոլորտում ապրելու , և շատերը նոյն իսկ այդ վիճակում կը դիւրանան , բայց այդ գիրութիւնը ու այդ կեանքը խարուսիկ է , և այդ կարգի կենդանիները շուտով անդնդունակ կը դառնան աշխատութեանց և ենթակայ զանազան տարախոխիկ հիւանդութեանց : Եթէ հիւսիսային ցուրտ կամ բարեխառն կլիմայի տակն էք ապրում , ձեր և ձեր կենդանեաց բնակարանի լուսամուտները և դռ-

ները որքան կարելի է ուղղեցէ՛ք դէպի հարաւ : Եւ սովորութիւն դարձրէ՛ք , ձմեռ ժամանակ գոմերը կամ ակոռաներ տաքցունել կրակով , որովհետեւ կրակը չոր և մաքուր , օդաւէտ կը պահէ բնակարանը : Իսկ եթէ դուք , այրեցեալ երկրներուն է՛ք , նախ ընտրեցէ՛ք հիւսիս արեւելք բանալ՝ լուսամուտները և դռները : Յուրտ կլիմայի տակ աւելի յարմար և առողջարար է , փոխանակ յատակը քարէ , սալայատակ կամ սիւնաղով անելու՝ տախտակամած չինել : Զուրը չը լճանալու և փրտուիներ առաջ չը բերելու համար . պէտք է յատակը չինել մէկ կողմի վրայ մի քիչ զառիվարի , որ ջուրերը և աղը մի տեղ վազեն և կենդանիների տակը չոր ու մաքուր մնայ :

Իսկ բարեխառն երկրներում աշխատելու է աւելի բնակարանը օդաւէտ պահել և չափազանց չը ջերմացնել : Աշխատելու է 15° — 20° ջերմաչափը հաստատ պահել ակոռաներում :

Միայն ձմեռ ժամանակ նոր ծնած տաւար , ոչխարի բնակարանը պէտք է պահել 25° — 30° ջերմութեան մէջ , մինչև նրանց քառասունքի անցնիլը , յետոյ կամաց , կամաց իջեցնել ջերմութեան աստիճանը , Զիւրու տեղը համեմատաբար շատ աւելի մաքուր և զով պահելու է , 15° :

Ոչխարները կը սիրեն մթութեան մէջ անդատանալ և երկար որոճալով մարսել նախորդ օրուան կերածները , դրա համար պէտք է միշտ նրանց գոմերի գոմերը և լուսամուտները փակ պահել , միայն գաղանի փոքրիկ բացուածքներից միշտ մաքուր օդ ներմուծել գոմերում , մանաւանդ այն տեղեր ուր ոչխարի քանակը շատ է : Բնակարանները պէտք է բոլորովին ազատ լինին ջրի հոսանքներից և խոնաւութիւնից , որ կարող է մեծ գեղազուութիւն պատճառել կենդանիներին :

ՍՆՆԴԱՌՈՒԹԻՒՆ

Թէ մարդոց և թէ կենդանեաց մօտ անդառութիւնը կախուած է մի քանի գործողութիւններից վեր առնել կամ բռնել աննունդները , ծամումն և լորձնոտումն , կլանումն , որոճումն , մարսումն ստամոքսային և մարսումն աղեաց , աղիքներու ծրծումն և աննունդների տարրացումն (assimilation) արեան մէջ :

Մանդառութիւնը ինչպէս մարդոց՝ այդպէս և կենդանեաց մէջ , կը տարբերի երկրէ երկիր , կլիմայէ կլիմայ . տեսակէ տեսակ և նոյն իսկ անհատէ անհատ ու հասակէ հասակ : Մանդառութեան ընդհանուր ձևերի և դերի մասին խօսելէ առաջ , կարեւոր է հոս նշանակել համառօտակի , թէ ինչ է աննունդ . Մանունդների տեսակը . Ամեն նիւթ կամ դոյացութիւն որ բերանի միջոցաւ մարսողութեան գործարան կիջնէ և հոն ստամոքսային հիւթի (sug-gastrique) տակ տարբազադրուելով արեան մէջ , կեանքի շարունակութիւնը կապահովէ , աննունդ կանուանուի : Սննունդները զլիաւորաբար երկու տեսակի են՝ հաստատուն և հեղուկ (solide et liquide) վերջինը՝ զլիաւորաբար խմելիք է : Քիմիական տեսակէտով աննունդները կը բաժնուին նոյնպէս երկու զլիաւոր թազաւորութեանց , անգործարանաւոր կամ հանքային (inorganique ou mineraux) և գործարանաւոր (organique) : Առաջին տեսակում մեծ և կարեւոր տեղ կը բռնեն նախ՝ աղերը , յետոյ երկաթ (fer) լուսածնաթ , ֆոսֆաթ-տը-բոթաս , կալաքար (soude) մանէզիում և կիր՝ (chaux) սրանք , բոլորն ալ ի յայտ կուգան կերակուրներում զանազան երեւոյթներով , զուտ կամ տարրալուծուած :

Գործարանաւոր (organique) մնուները կը յառաջանան բուսական և կենդանական թաղաւորութիւնից: Քանի որ այս տեղ մեր նպատակն է միայն խոտակերները, դրա համար մենք միայն կը զբաղուինք բուսական սնունդներով: Քիմիական տեսակէտով գործարանաւոր մնուները կը բաժնուին նոյնպէս երկու գլխաւոր տեսակի բորակածընային (azotés), և ոչ բորակածընային (non azotés): Ուրիշ խօսքով՝ առաջի տեսակը բացառապէս հարուստ է բնասպիտակային (albumine), ու մնուղի կամ հատիկներու հիւթ (sève) ըսուած մնուղի նիւթով: Այս տեսակի մէջ, մեծ դեր կը խաղան նաև քաղէումը պանրահիւթ (caséine) և բոյսերու ժէլատինը: Վերջապէս ըստ Գերմանացի մեծ գիտնական-փոօֆէսոր Լիպերիսիին, ամենէն զօրաւոր մնուները կը պարունակէ հետեւեալ զըլխաւոր նիւթեր:

Ածուխ (carbon)	առ 0/0	52,7	մինչև	54,5
Ջրածին (hydrogène)	առ 0/0	6,9	»	7,3
Թթուածին (oxygène)	առ 0/0	20,9	»	23,5
Բորակածին (azote)	առ 0/0	15,2	»	17,0
Մծումբ (soufre)	առ 0/0	9,8	»	12,0

ահա ամենէն կատարեալ մնուղի համեմատական բաղադրութիւնը:

Երկրորդ՝ ոչ բորակածին (non azoté) նիւթերն են՝ ջրածնաբնածուխ (hydratede carbon) և օլա կամ ճարպ (la graisse)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊՃԱՆԱԶՈՒՄ ՍՆՆՈՒՆԴՈՑ

Այս տեղ մեր նպատակից դուրս լինելով մնուներէ մանրամասն տարրալուծման մէջ մտնել, կը բաւականանանք ասելու որ, վերոյիշեալ նիւթերը կ'որոշուին նաև խտացած (concentrés) և ոչ խտացած մնուներով: Քանի որ՝ գործը մնաստնների առողջապահութեան կը վերաբերի, կը մնայ մեզ դիտնալ թէ՛ ո՞ր նիւթերը աւելի բնասպիտակուց (albuminoïde) կը պարունակեն և որոնք աւելի ճարպային, որ ըստ այնմ գործադրենք կեանքում: Այն ամեննիւթ որ դիւրաւ կը լուծուի, (éthere) ըսուած հիւղանիւթի մէջ, ճարպային է: և հետեւաբար աւելի՝ նպատակայարմար է տալ այն կենդանիներին որոնց կուգինք շուտով գիրցնել և կամ նպատակ ունինք միայն իւղով կաթ վերցնել նրանից: Իսկ եղներին, ձիերին և աշխատաւոր կենդանիների համար, նպատակայարմար է տալ այն նիւթերէն որ, աւելի, տոյսպէս ասած խտացած են բնասպիտակուցով (azotés): Այս վերջիններու տեսակը՝ բաղմամբիւ է և աւելի փնտռելու է արմտիքներու կարգին: Ջոր օրինակ՝ ցորենաբոյսերու (des graminées) բակլաներու տեսակները (fèves) որ կը կարունակեն խտացած նշատայ (amidon) կամ ուրիշ խօսքով բորակածին և (albumine) զանազան չաքարահիւթեր (cellulose, glycoses): որք կենդանական ուժի կեդրոնացումն են:

ԵՐՐՈՐԴ. ՏԵՍԱԿԻ ՄՆՆՈՒՆԴ

Կայ մի երրորդ տեսակի մսունդ ջրային կամ թարմ, կանանչ խոտեղէնք (les fourrages verts) ասոնք իրենց միջակ և բարեխառն կազմով և վերին աստիճանի զիւրամարսութեամբ, տալիս են կենդանիին խիստ զօրաւոր և օգտակար մսունդ, թէ կաթի, թէ գերանալու և թէ աշխատանքի համար: Ասոնց զլիաւոր տեսակներն են վարսակի, ոլոռնի, առվայտի և մի քանի թարմ արմուխներու տեսակները. որոնք զլիաւորաբար կը պարունակին խիստ մածուծիկ և մսնուցիչ հիւթ մը քօլօիտ c Hoid) մսունով:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՄՆՈՒՑԱՆԵԼՈՒ ԿԵՐՊ

Ինչպէս նախորդ գլխում ասինք, նայած տեղւոյն կլիմային և կենդանական տեսակին և աշխատանքին ըստ այնմ պէտք է զանազանել կենդանիներին մսունդները: Այն կերը որ օգտակար է, ցուլին և լծկան գումէշին, միևնոյն օգտակարութիւն երբէք չի կարող ունենալ կլիման կովին և ոչխարին համար:

Այն որ կարող է օգտակար ըլլալ կլիման կովին, չի կարող օգտակար դառնալ գերայնելու զրուած խոզերին և կովի հորթին ու ձագերին: Քանի որ այս այսպէս է, պէտք է, աշխատել մի քիչ փորձառութեամբ, ամեն մի տեսակին իրեն յարմար մսունդ և խնամք տալ:

Մեր ծրագրից դուրս լինելով մանրամասնութեանց մէջ մտնելու, կը բաւականանանք ըստ փոփոխութեան Ս. Սանտինի տալ հետեւեալ ֆօռմիւլներ, որ չափաւոր և նպատակայարմար են ամեն մի տեսակ կենդանիին:

Աշխատաւոր եղան համար օրական

7—8 քիլօկրամ յարթ ցորենի կամ գարու

2—3 » » առոյտ կամ խոտ

4—5 կրամ աղ

2—3 քիլօկրամ բակլա (fèves) կամ ֆուլ

Եւ օրը երեք անգամ կրկնել այս քանակութիւնը: Երբեմն միայն տեսակները փոխել եղանակի եւ աշխատանքի համաձայն:

ԿԹԱՆ ԿՈՎԻ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Կլիման կովերի մսնդատութեան պէտք է շատ զգուշ լինել, մսունդի ազդեցութիւնը 24 ժամուայ ընթացքում իսկապէս զգալի է կաթի վրայ. պատահել է, շատ անգամ որ, կաթ և նոյն իսկ պանիրը թունաւորել և վնասուել են վատ մսունդի պատճառաւ: Զգուշանալու է, որ դանազան փտած, կանանչ խոտերով կամ թունաւոր բոյսերով խմորում (fermentation), առաջ չը բերել կովի փտում, հակառակ պարագային ո՛չ միայն կաթը կը փճանայ օրերով, այլ և կովի առողջութիւնն ևս կը խանգարուի երկար ժամանակ: Այս բանը աւելի վտանգաւոր է այն գիւղացիներու համար, որի հորթն ևս ծըծելով մօրմէն, կարող է վարակուիլ զանազան հիւանդութիւններով:

Մսունդի օրուան ֆօռմիւլը, կլիման կովի համար.

Առոյտ կամ զանազան խոտեր 5 քիլօկրամ:

Գետնախնձոր (երբեմն խաշած) 12 »

Բուսպ (կտաւատի, քօլզային) ևն 3—5 »:

Հունտերու մնացորդք . . . 2—3 քիլօկրամ:

Ասկից զատ՝ կլիման կովի համար կան մի քանի ֆօռմիւլներ, զրեթէ միևնոյն համեմատական չափերով: Սա ճիշտ է որ, կլիման կովի համար աշխատելու է մսունդի տեսակները փոխել և միշտ թարմ պահել և կլիման կովին տալ քիչ քիչ մսունդ և յաճախ, Շատ տեղեր գետնախնձորի (pomme de terre) փոխարէն կը նախընտրեն տալ տակ, բանջար (betterave) ևն: Զը պէտք է մոռնալ նաև աւելցնել այդ խառնուրդում միշտ ցորենի թեփ (son de froment) լափայ չինուած: Օգտակար է նաև երբեմն կլիման կովին տալ եգիպտացորեն և բամբակի քուսպը:

ՄԱՏՆԱՇ ՀՈՐԹԻ ԴԻՐԱՑՈՒՄԸ

Կենդանեաց անդառութեան գործը վերջացնելէ առաջ, աւելորդ չի լինիր նշանակել այս տեղ մատղաշ հորթի գեթացման միջոցները: Այս բանի համար նախընտրելու է առողջ և գերանալու հակամէտ խորթեր, բոլորովին առանձնացնելու է, իւր մօրից և պահելու է բաւականին տաք 15⁰ 17⁰ չոր և խիստ մաքուր, օդաւէտ տեղում, եւ այսպէս խնամքով առանձնացած մատղաշ հորթին, պէտք է միմիայն սնուցանել կաթով, օրական տալով 25-30 լիտրա (շիշա) կաթ: Այս տեսակ հորթերի գիւցուումը, սընդագատուութիւնը կը կատարուի, բիւբերօն ըստած գործիքով, որը խիստ յարմար է, կաթ տալու հորթերին, նախ սկսելու քիչ քիչ կաթ տալ հորթին, յետոյ կամաց, կամաց շատցնելու է: 40-45 օրէն յետոյ գիրացած հորթը կը յանձնուի մատակարարին:

Ձ Ո Ւ Ր

Կենդանական անունդի երկրորդ և էական մասն է կաղմում ջուր: Որը շատ անգամ ահաղին դժբաղդութեանց պատճառ կը դառնայ տալով անասուններին պաճարախտը և զանազան տարախիտիկ հիւանդութիւններ: Դրա համար լաւ երկրագործը կ'աշխատի ամեն կերպ հոգս տանիլ, որ իւր ընտանի անասունները մաքուր և զուտ ջուր խմեն, Պէտք է ջուրը զտուած լինի զանազան աղային և հանքային խառնուրդներէ: զրա համար պէտք է ազարակներում ժիշտ պատրաստել աւաղով զտացուցիչ հորեր, Կենդանիների համար խմելիք ջուրի տաքութեան աստիճանը 12⁰ — 15⁰ էն բնաւ վար իջնալու չէ:

ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

Ո՛չ միայն բնակարանի, անունդի և ջուրի անհրաժեշտ և անպայման մաքրութիւն է հարկաւոր կենդանեաց առողջապահութեան համար, այլ և լաւ երկրագործը, ինչպէս ասում են, բնաւ ձեռք չի վերցնի իւր կենդանեաց վրայէն: Ջուրը և անունդ մաքուր՝ իսկ կենդանին կեղտոտ պահելով կը նմանի մաքուր կերակուր կեղտոտ ամանի մէջ, կամ հաւկիթ մը ցելով ծեփել և ուղենալ որ նա երկա՛ր ապրի: Միթէ՞ առանց օդի, այն ալ առանց մաքուր օդի կա՞յ կեանք: Դրա համար անհրաժեշտ է որ օրը գէթ երկու անգամ բուր կենդանիները քերոցներով և խողանակներով ու թըռուած լաթերով մաքրել:

Մաքրեցէ՛ք ձեր կենդանիները ի՛նչպէս և ո՞րքան որ կարող է՛ք, անունդ և մաքրութիւնը, բժիշկին և քահանային կը հեռացնեն մարդու դժուրը:

ՎԵՐՋ Ա. ՄԱՍԻՆ





ՄԱՍՆ Բ.

ԳԼՈՒԽ Ա.

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՒՂԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

1003
10925

Որքան որ , լաւ պահուած և խնամուած կենդանի-
փճ՝ լինի ձի , եղ , ոչխար , կամ խոզ 0/0 99 ը աղատուած
կը լինի պաճարախտից և զանազան տարախտիկ հիւան-
դութիւններէ , բայց և այնպէս հակառակ ամեն տեսակ
զգուշութիւններէ , պէտք է մտածեն երկրագործները որ ,
լինչպէս ասում են , որով կենդանի փորձանքը կամ փորի
տակն է կամ պիտի վերե . ոտով խոհեմ և գործի տէր կա-
լուածատէրը միշտ իւր ազարակում պատրաստ կ'ունենայ
մի փոքրիկ դեղատուն , հետեւեալ զլիաւոր տեսակի դե-
ղերով :

Աւէղատ տ'ամոնիակ	(Acétate d'ammoniaque)
Ատիտ սիւլֆուրիկ	(Acide sulfurique)
Ատիտ ֆէնիկ փիւռ	(Acide phénique pure)
Ալքալի վոլաթիլ	(Alcali volatil)
Ալքոօլ տը մանթ	(Alcool de menthe)
Քուբրօզ պլանչ (Couperose blanche sulf. de zinc)	
» վերտ	» verte » de fer
» պլէօ	» bleue » de cuivre

Գի քարածեփ աղ սուտ (Bi carbonate de soude)
 Քամֆրը (Camphre)
 Ալին քալսինէ (Alun calciné)
 Քոնէմ աղ թափորը սօլիւպը Crème de tartre soluble
 Էսանս աղ թէնէպանթին (Essence de térébenthine)
 Էթեր սիւլֆուրիկ (Ethere sulfurique)
 Ֆարին աղ մութարա (Farine de moutarde)
 Իոտոֆորմ (Iodoforme)
 Լաուտանում (Laudanum)
 Քլորհիտրիկ (Chlorhydrique)
 Քլորիա փիւռ (Chlorhydrique pure)
 Ասիա աղ պօռիկ (Acide de borique)
 Սալօն վէր (Savon vert)
 » նուար » noir)
 Սէլ աղ նիթրը (Sel de nitre)
 Սիւպլիմէ քօռօղիֆ (Sublimé corrosif)
 Սիւլֆատ աղ սուտ (Sulfate de soude)
 Թէնէպանթին օրդինէն (Térébenthine ordinaire)
 Թէնթիւռ տիօա (Teinture d'iode)
 Կուտրօն (Goudron)
 Վազլին (Vaseline)
 Չիթաիւղ (Hui'e d'olive)

և այլն. և այլն.

Դեղարանին յատուկ մի քանի տեսակ իւղեր, բամբակ, վէրքեր կապելու բանտածներ և զանազան փոքրիկ գործիքներ և մեքենաներ, զմելի, մախա, նլարոք (lancete) Խոզանակներ և մաքրելու զանազան գործիքներ, որպէս զի գիւղատնտես երկրագործը կտրողանայ ի հարկին փոքրիկ

Վերաբուժական գործողութիւններ (opérations) կատարելու Ֆէրմուս:

ԲՈՅՍԵՐ ԵՒ ԲՈՅՍԱՐՄԱՏՆԵՐ ԻՅՐ ԴԱՐՄԱՆ

Գիւղական կամ աւելի ճիշտ կենդանիների համար պատրաստուած դեղատուներ, կարենալ լիովին օգտակար դարձնելու, ահրաժեշտ է այս աւել աւելացնել այն բոյսերի և բոյսարմատների տեսակները, որոնք անհրաժեշտ են դեղատան մէջ, իբր անմիջական և բնականօրէն ամենէն զօրաւոր դարման կենդանիների զանազան հիւանդութիւնների դէմ: Այս կարգի բոյսերը գլխաւորաբար կը բաժնուին երեք տեսակի.

1. — Հոյզային (musilage) որ ամենէն՝ այսպէս առած, անուցիչ տարրն է, տարածուած զանազան բոյսերու մէջ:

2. — Գոգոնի կամ տաքցնող բոյսեր.

3. — Յատուկ յուզող, գոգոն բոյսեր, որ երկու տեսակի են, նախ՝ ձգտական կամ լուծող և երկրորդ՝ պղնդացնող կամ բռնող բոյսեր:

Առաջի կարգի բոյսերը որ կ'ստանան նաև կոկլազուցիչ անուան, կը գործածուին թէ իբր խմելիք և թէ իբր փաթաթ (Cataplasme) սպեղանի, որոնց գլխաւոր տեսակներն են.

1. — Կտաւատ (Grains de lin) ամենուան ծանօթ լինելով սրա հատիկի և իւղի գործածութիւնը և օգտակարութիւնը, բացատրութիւն աւելորդ կը համարենք, առ շատ կը գործածուի իբր փաթաթ (Cataplasme):

2. — Բաղրջուկ (Mauve) գաւառաւորաբարով ճըն-
ճըղու պաշար կամ պաճուկ (*) կը գործածուի իբր փաթաթ
սպեղանի .

3. — Հարսնուկ (Coque'icot) գաւառական բառ-
բառոյ պթուկ , տերեւներ բացուելէն յետոյ կարմիր կա-
կաչի կը նմանի .

4. — Դարի (Orge) որ ծանօթ է , իբր ամենէն զօրա-
ւոր սնունդ մանաւանդ ձիերու համար . կը գործածուի իբր
լափա փաթաթ և խաշած ուտելիք , նաև ջուրը խմելիք
գարեջուր (Bière) :

5. — Թեփ (դարու , ցորենի ևն.) (Son) որի օգ-
տակարութիւնը հետզհետէ պիտի ծանօթացնենք ընթերցո-
ղին հիւանդութիւնների դարմանման ժամանակ :

6. — Տուղտ (Guimauve) Մատուտակ (Reglisse)
այս երկուքի արմատները ալիւրի ձեւով 0/0 30-50 խառ-
նուելով մեղրի կամ մելասի հետ , կը կաղմնն ամենէն զօ-
րաւոր փափկացուցիչ և ցաւեր մեղմացնող խմելիք :

Ծանոթ. — Գաւառներում սա տապակկուած ծուով, Բամեղ կե-
րակուր է, կուտայ տափակ ոսպի մմամ Բատիկմեր:

Բ. ԿԱՐԳԻ

ԳՌԳՌԻՉ ԵՒ ՏԱՔԱՑԵՆՈՂ ԲՈՅՍԵՐ

Ասոնց զլիսաւորներն են .

1. — Եղիսպակ (Sauge) որ կենդանիների համար
կը գործածուի իբր խմելիք . (décoction) շատ եփելով
ջրի մէջ .

2. — Խնկունի (Rosmarin) որ անուշահոտ բոյր մը
ունի , օգտակար է թէ մարդոց և թէ կենդանեաց համար
գործածել , իբր թիզան , բուսական ըմբելիք :

3. — Մնանուխ (Menthe) որ ողին ջրախառն կամ
զուտ կը գործածուի խիթերու և փորցաւների դէմ :

4. — Երիցուկ Camomille) որի տեսակները շատ
են կը գործածուի իբր թէյ .

5. — Օշին տր (Absinthe) դառն զօրաւոր բոյս մ'է
կը գործածուի իբր տեքօքսիտն այսինքն շատ եփել ջրում :

6. — Թաթրվէնի ծաղիկ , միւնայն դեր ինչ որ քա-
մօմիլը :

7. — Գինարբի (Genièvre) արտադանի , հոտաւէտ
ձերմակ ծաղիկներով ծառատունկ է :

ՅԱՏՈՒԿ ԳՌԳՌԻՉ

ՈՒ ՍՏԱՄՈՒՄԻ ՎՐԱՅ ԱԶԴՈՂ ԲՈՅՍԵՐ

Ասոնք զլիսաւորաբար երկու կարգի են , լուծողա-
կան կամ մաքրող (plantes purgative) եւ երկրորդ
բռնող կամ պնդացնող .

Իբր լուծողականներն են .

1. — Թանթրուենիի ծաղիկ , (Sureau) եփել ջրի մէջ շատ (décoction) խմցնել մեծ կենդանիին 500 կրամ
2. — Տարեկան մէքքութիւն , որ կարելի է գործածել իբր զօրաւոր մաքրողական խմցնելով կամ ի հարկին ներմուծելով , (injection) .
3. — (Gratiola) չափա 100-150 կրամ եփել , ջրի մէջ շատ :

Երկկամուցի վրայ ազդող բոյսեր

Լուծողական բոյսերի մէջ մեծ տեղ են բռնում բուռն երկկամուցի վրայ ազդող մաղձ դատող , արիւն մաքրող բոյսերը :

Ասոնց գլխաւորներն են .

1. — Ծնեփեկ (Asperge) այս բոյսը ծանօթ է իբր առաջի կարգի բանջարեղէն , (légumineux) խիստ դիւրամարս , անսպասելի կերակուր է , կը զատէ մաղձը արիւնէն և կը նպաստէ մեզի շատանալուն : Սրա արմատը , ալիւրի ձեւով 100 տրամ 1 լիտրա ջրի կամ գինիի մէջ , առաջի կարգի մաքրողական է եւ մեծ դարման միզարգելութեան դէմ , (inflammation de vessie)
2. — Ազատքեղ (Persil) դաւաճական բաղաւորով մանդակ . ասոր կարգէն են նաեւ նուէնջ , ժախ եւ այլն բոյսեր : Գործածութիւն ըստ վերնոյն :
3. — Մահմըտուկ (Arrête-Bœuf) սրա բոյսը , խիստ համեղ կերակուր մարդոց համար . իսկ արմատը խիստ զօրաւոր դարման մեղափամփուշտի բորբոքման դէմ : Գործածութիւն վերնոց նման :

ԲՈՒՆ ԳՌԳՌԻՉ ԵՒ ԲՈՆՈՂ

ՊՆԴԱՑՈՒՑԻՉ ԲՈՅՍԵՐ

Այս կարգի բոյսերը խիստ հարուստ են թանիով , (Tan ou tanin) կամ ուրիշ խօսքով կաղնի ծառի կեղեւահիւթ կամ բնականիւն :

Այս բոյսարմատներու գլխաւոր տեսակներն են .

1. — Կաղնին (Chêne) որի կեղեւը , չորացած շուքի մէջ կը գործածուի իբր խմելիք 20 կրամ մէկ լիտրա ջրի մէջ , խիստ եփելով :
2. — Մորենի (Rence) 30-50 կրամ 1 լիտրա ջրի մէջ մեծ կենդանիի համար , 5-10 կրամ փոքրերին :
3. — Ընկուզի կեղեւ կամ ընկուզի խոցեր - ոստեր , Noix de galle) ասկից պատրաստուած (տէքօքսիօն) խմելիքը կաղնիէն աւելի զօրաւոր և ազդեցիկ է :
4. — Ուռնի (Saule) ասոր մէկ տեսակից (d'osier) կեղեւից կը պատրաստուի զօրաւոր բռնող հեղուկ : Գործածութիւն վերինների ձեւով : Այս տունկի չոգեբաղնիք զօրաւոր է «կուլ»-ի եւ «քոմաթիզմ»-ի դէմ :
5. — Կաղամախի (Peuplier) ասոր կարգէն են չաքանակի (Chataigne) և (էքալիփիլուս) տերեւները :
6. — Վայրի եղբոր (Chicorée sauvage ou pissenlit) այս բոյսը , որ կ'աճի առատութեամբ մարգագետիններում , ունի խիստ դառն համ , բայց եւ առաջի կարգի մարսող եւ բռնող բոյս է , խիստ օգտակար է եւ մարդոց համար և կը գործածուի գլխաւորաբար իբրեւ սալատ . Այս կարգի բոյսեր եւ տունկերն են նաեւ բողկը , չողգամ , տակ , ճակնդեղ (betterave) կաղամբ (choux) եւ մանաւանդ վայրի եւ մշակուած կանկարի տեսակները անխաբի . (des artichauts) :

ԳԼՈՒԽ Բ.

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԸ

Կենդանեաց մէջ հիւանդութիւնները՝ բացի պատահական դէպքերից (Accident), կը բաժնուին երկու գլխաւոր դասակարգի՝ ներքին եւ արտաքին :

Ամենից առաջ պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել պատահական դէպքերին , որոնք այնքան յաճախ են պատահում ագարակներում , օրինակ զանազան դէպքերու կամ վերքերի համար , պէտք է գործածել (ասիտ ֆէնիք) (սօլիւսիօն)ը , նայած դէպքին 10-15⁰)₀ , կը պատահի որ ձին , եզը կամ ջորին իյնալով կառքի կամ մեքենայի , բեռան տակ ոտքը ճըմլուի , տեղէն ելնէ , պէտք է իսկոյն կանչել մասնագէտ բժշկին (Vétérinaire) կամ փորձառու «պէյթար»ին եւ խնամել վիրաւոր կենդանին : Բայց այն կենդանիին որ ոտքը կոտրուած կամ ջախջախուած է , այլ եւս ո՛չ մի դարման օգուտ չունի , ամենէն խելօք կողմը այն է որ կենդանին կամ մասկաճառին տալ կամ եթէ ո՛չ գնատակի մէկ հարուածով սպաննել :

Խիբ . պատահական հիւանդութիւնների կարգին կարելի է դասել նաեւ խիթը կամ ուրիշ խօւքով ստամոքսի անմարսողութիւնը : Այս հիւանդութիւնը շատ անգամ կը լինի շատ սուր եւ մահաբեր , մանաւանդ ձիերի համար : Խիթի կամ «սանճուի նշաններն են , կենդանին կ'սկսի ոտով գետին քանդել , կը նստի կը կոյնի , կը հոտուրտայ , փորի վրայ կը նայի եւ յայտնի կ'երեւայ որ խիստ կը տանջուի փորից :

Այն աստիճան կը հասնի որ կենդանին կորսնցնելով իւր բնազդը , անշուշտ դիակի պէս վար կ'իյնայ :

ԴԱՐՄԱՆ

Պինդ չփել կոնակը եւ փորը եւ տաքուցած լեցուած լարթի չուալներով ու փալամներով տաքուցնել կենդանիի մէջը եւ փորը եւ միշտ պարզցնել : Եթէ չ'անցնի պէտք է արիւն առնել ականջի բլթակներէ կամ թեւատակի բազկերակներէ , որի համար սակայն հարկաւոր է մեծ փորձառութիւն եւ զգուշութիւն : Աւելի դժուարին պարագային տալ խմելիք «եղեսպակ , ատա չայի» (Sauge) եւ կամ իբր թէյ՝ (երիցուկ) (Cammomille) , ասոնք երբեմն պէտք է խառնել տաք զինիի կամ խնձորաօշարակի հետ աւելցնելով 2 0/0 զինուոյ ոգի (Alcool) : Վերջապէս աւելի դժուար պարագային տալ լուծողական , մէկ լիտրա ջուրին՝ 200 տրամ գէլթ կամ կոտուտի իւզ , 5-6 հաւկիթ մէջ զարնել եւ 40 50 տրամ աղ : Իսկ եթէ կենդանին իրիթի հետ ունի փորճարութիւն . մէկ լիտրա զոյ ջրին տալ 10 - 15 կրամ (լօտանիւմ) եւ 30 կրամ « եթեր » . ամենանեղ պարագային կոտարել ներմուծում (Injection) 200 տրամ ձիթաւու 100 տրամ աղ 2 - 3 լիտրա ջրի համար . եւ քիչ սապոն լուծուած ջրի մէջ :

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԹՈՒՆԱՆՈՐՈՒՄԸ ԿՍՄ ԽՄՈՐՈՒՄՆ (Fermentation) ՍՍՄՈՐՄԻ :

Ներքին եւ միանգամայն պատահական հիւանդութեանց կարգին կարելի է դասել նաեւ կենդանեաց՝ մանաւանդ սուճարների եւ սլխարաց թոնաւորումը կամ թարմ , կանաչ խտույ , մանաւանդ ատոյաններից լանիարծական տուլը . դա ամենուրեւ ծանօթ , այն խիստ հիւանդութիւն է , որ անխնամ մնացած կենդանին , կարող է շատ կարճ ժամանակամիջում անշնչանալ : Այս երեւոյթը առաջ կուգայ ոչ այնքան կեն-

դանին թունաւորելուց, որքան ստամոքսում մեծ քանակութեամբ կազի գոյանալէն. պէտք է վերին ստորիճանի զգուշանալ որ, կենդանին գիշեր կամ առաւօտեան կանուխ չը լափիլիք մեծ քանակութեամբ քողով թրչուած կանաչկէշեր մանաւանդ տոյսը (Luzerne) :

ԴԱՐՄԱՆ

Պէտք է ծակել նշարակով ուռած կենդանիի ձախ քովը, որտ համար սակայն հարկաւոր է մեծ փորձառութիւն և զգուշութիւն : Արիւն հանել տկանջի բլթակներէն կամ մէկ եզրէն . չը թողուլ որ կենդանին նստի, այլ ջանալ միշտ պըտշտցնել : Իբր խմելիք տալ աւշային կաղ (կաղ ամօնեաք) 10 կրամ մէկ լիտրա ջրի մէջ լուծուած : Եթէ դա էլ չկայ կենդանիի բերանէն լեցնել ջրախառն « մածուն » կամ (թան) իսկ եթէ դա ալ չկայ, բաւական է նոյնիսկ կովի շորը լաւա (Bouse) չինել և բռնի խմցնել հիւանդին, իսկոյն կը սկսի փսիսել, կազը դուրս կ'ուզայ և կենդանին ազատուած է վտանգից : Ամենէն զործնական միջոց տալ սրճոտ, այսինքն՝ կտոր մը լաթ վառել և մուխ տալ քթին :

ՓՈՐՆԱՐՈՒԹԻՒՆ (DIARRHÉE)

Փորճարութիւնը՝ բոլոր կենդանեաց մանաւանդ եղնորի մօտ, և երբեք տեսալ է, սար և դադաղ : Առաջինը պէտք է դասել արթնամանրու կարգ և փոքրիկ զգուշութիւն կերակուրներու և մի քիչ խնամք և շուտով կանցնի այդ աղեաց կրիվալը : Իսկ ընդհանուր փորճարութիւնը առաջ է գալիս զանդադրէն և հետզհետէ ստատիւնում : Պէտք է որոնել պատճառը :

Պարզ է որ, այս հիւանդութիւնը անմիջական այնքան ծանր և վտանգաւոր հետեանք չ'ունի, սակայն չափազանց կը թուլացնէ կենդանիին ֆիզիքական կազմը, կենդանին չատ թոյլ, անպէտք կը դառնայ աշխատութեան և ենթակայ դահաւան տարախիտիկ հիւանդութիւնների :

ԴԱՐՄԱՆ

Այս երկարատե ցաւի, հիւանդութեան դարմանումը կը տարբերի ամեն տեսակ կենդանիի համար . Օրինակ՝ երբ ձիերի մօտճտնուող փորճարութիւն՝ նախ լուծել տալու է, յետոյ արհեստական միջոցներով և պինդ պինդ շփելով տաքուցնել կենդանիին կանակը և փորը, յետոյ լաւացնել անունը և մի քանի օր դարինը խաշած տալ, յարթը մաքրել զանազան աղանդութիւններից՝ մանաւորապէս հաւերի կըղկըզանքներից : Եթէ փորճարութեան հետ կենդանին ունի նաև խիթ (նայիլ խիթի դարմանումը) զործածել նաև դեղին կօճէ և գլմարէ (Galle) պատրաստուած թէյ (décoction) ասոնց չը դանուած տեղ կաշիի ծառի կեղեկց պատրաստել խմելիք :

Որոճողաց կամ խոտակերների մօտ ալ չատ չի տարբերիր այս հիւանդութեան դարմանումը : Միայն վերոյիշեալ (խմելիքների) հետ խառնելու է մի քիչ ալքօօլ : Իսկ եթէ կենդանին մեծ և զօրաւոր է 3-4 օր առաւօտ կանուխ տալ մէկ մէկ ջրի գաւաթ ալքօօլ խառնուած 2 գաւաթ ջրի հետ, կէս ժամ յետոյ տալ թեփէ (Son) լափա, խառնուած մի քիչ աղով և 40-50 տրամ մեղրով : Շատ տեղեր կենդանին սովորութիւն չ'ունի այդ լափան ուտելու, պէտք է բռնի բերանէն լեցնել :

Փոքր կենդանիներու մանաւանդ գառներու և հաւել-
յու մօտ փորհարութիւնը չափ անգամ մահացու է ։ Ամենէն
աղքեցիկ միջոց հաւելի համար դործածել քրեմալը թաթթր ։
(Crème de tartre) Մէկ ապուրի զգալ լուծուած մէկ
լիտրա ջուրի մէջ ։ Եթէ փորհարութեան կ'ընկերանայ նաև
խիթ , որի նշան է որ հաւը լաճախ կը նստի , կը կայնի և
չի ուտեր , պէտք է վերոյիշեալ մէկ լիտրա հեղուկին աւել-
լացնել 5-6 կաթիլ լօտանում (Laudanum) սրա բացա-
կայութեան միշտ հաւելի խմելիք ջրի հետ կարելի է գոր-
ծածել քիչ քանակութեամբ ալքոոլ ։

ԱՄՐՈՒԹԻՒՆ ՆՐՅԱՂԵԱՅ (CONSTIPATION)

Այս հիւանդութիւնը ճիշդ փորհարութեան հակոտնեան
է և կրկին առաջ կուգայ ստամոքսի և աղեաց անմարսու-
ղութիւնից ։

ԴԱՐՄԱՆ

Սովորաբար թէ միասնաբանութեան և թէ որոշողաց մօտ
կը գործածուի սապոնախառն զանազան ձէթեր . մի քանի
հաւկթի դեղնուցի հետ զարկուած իբր մաքրողական , առ-
ջարների և ոչխարաց համար նպատակայարմար է աւելի գոր-
ծածել անուշաորի ողին (Solution d'ammoniaque)
10-15 տրամ մէկ լիտրա ջրի մէջ ։ Աւելի լաւ է գործածել
բուսորմասների մաքրողականները (տես լուծողական բոյսե-
րը) ։ Եթէ ատենք ևս բաւական չլինին պէտք է 3 լիտրա դաղջ
ջուրի մէջ խառնել 50-100 տրամ հասարակ աղ 100-200
տրամ ձիթալուղ և կենդանիի բերանը բանալով բռնի լեցնել
կոկորդից ։ Յետոյ պէտք է խնամք տանիլ որ կրկին պնդու-
թիւն առաջ չի գայ . Այս բանի համար պէտք է պարիկ կամ

առջարների կեր՝ լուպիան (Foule) խաշած կերցնել , թէ-
փէ լափա խմցնել և խոտ ու կանաչեղէն առատ տալ կեն-
դանի'ն ։ Այս վիճակին ենթարկուող կենդանիին աշխատելու
միշտ շարժման մէջ պահել ։

ՄԻՋԱՐԳԵԼՈՒԹԻՒՆ (MALADIE DE REINE)

Աղեաց կամ ստամոքսի պնդութիւնից աւելի ծանր և
վտանգաւոր է միզարգելութիւնը , ուրիշ խօսքով երիկա-
մունքի հիւանդութիւն ։ Այս հիւանդութիւնը առաջ կուգայ
զանազան պատճառներից և ըստ այնմ կ'ունենայ զանազան
երեւոյթներ . կը պատահի որ քար կամ աւազահատիկներ
կը գտնուի միզային փամփուշտում (Vessie) , այս պա-
րագային պէտք է իսկոյն կանչել անասնաբուժին և օքերա-
սիօնով հանել քարը ։ Իսկ եթէ հիւանդութիւնը կամ բոր-
բոքումը բուն երկամունդումն է և այդ բանը առաջ է եկել
բնակարանի խոնաւութիւնից , անդի վատութիւնից , ցուր-
տից կամ այլ պատճառներից , պէտք է կատարել լուպու-
(Injection) գործողութիւններ . և յետոյ 'ի հարկին դնել
փաթաթներով (Cataplasme) տաքցնել կենդանիի որո-
վայնը միզային փամփուշտները և մէջքը (Reine) յետոյ
տալ կրկին եփուած խմելիքներ և թիզաններ նախ՝ երիկա-
մունքի (Rognon) վրայ աղդող բոյսերից ։ Յետոյ տալ
մեծ քանակութեամբ եգիպտաօւտնի (Lupin) և գարիկ
(Orge) խաշած ջուրը ։

ԱՐԻՒՆ ՄԻՋՈՒԹԻՒՆ (Pissement de Sang)

Այս հիւանդութիւնը առաջնի շարայարուծիւն է և աւելի զարատանջ և մահացու, մանաւանդ երիտասարդ ջորիներու և ձիու քուռակներու (Poulain) մօտ :

ԴԱՐՄԱՆ

Վերելի խնամք լիովին և յետոյ ի հարկին տալ նաև 40 կրամ «ալոյէ» լուծուած մէկ լիտրա դաղջ ջրում, եւ խմեցնել փափկացնող բոյսեր (տես էջ 19-20) :

ՈՐԴԵՐԸ ՍՏԱՄՈՔՍՈՒՄ (Vers intestinaux)

Այս տեղ ստամոքսի և աղեաց (Abdominal) ներքին հիւանդութիւնների մասին մեր ըսելիքը վերջացնելէ առաջ, աւելորդ չի լինիր փշատակել և ստամոքսի որդային հիւանդութիւնը որ թէ մարդոց և թէ կենդանեաց մօտ մեծ և զանազան դժբաղդութիւնների և հիւանդութեանց պատճառ կը դառնան : Այս որդերու ամենէն վնասակար և դժուարաբժշկելի տեսակը «թէնիւն» է (Tænia, Vers solitaire) որ յաճախ կը գտնուի խոզերի և շների մօտ և որոնցմէ խիստ դուրաւ կը վտխաղուի նաև միւս կենդանեաց և մարդոց վրայ : Այս հիւանդութեան նշաններն են որ կենդանին կուտէ շատ, բայց և միշտ նիհար և մաղերը չոր, անխալ և փէտացած բիզ-բիզ կը անկուին : մորթն ալ չոր և քրքրըշնած է, բերանը միշտ քրքով պատած և կենդանին մի անեջ ունի լիզելու և աղ կամ խմորեղէն ուտելու :

ԴԱՐՄԱՆ

Լուացնել և փափկացնել սնունդը և զրտել մաքրել : (Filtration) Տալ 30-60 կրամ բէզէկինի խէփի ուլին, (Essence de térébenthine) խառնուած 1 լիտրա աւելիէ նաշայի, (Amidon) կամ եթէ մատուտակի (Reglisse) և կամ «տուղա» (Guimauve) ալիւրի հետ . . . :

ՇՆՋՍԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՄԱՆՍՅ

ՀԻՒՍՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ներքին հիւանդութիւնների կարգին խիստ մեծ ուշադրաւ տեղ կը բռնէ շնջառեարական գործարանաց հիւանդութիւնները : Այս տեղ առանց մանկուս սակայն կենդանական օսկանիւղի «անաթոմիական» քննութիւնների մէջ, պէտք է տեսլ որ շնջառեարական գործարանները՝ մասնաւորապէս թոքերը (Poumons) էական անհրաժեշտ կարեւորութիւն ունեցող գործիքներ են կենդանական կեանքը վերապահելու համար, մանաւանդ եթէ նկատի առնենք այն հարցը որ միւս բոլոր գործարանները աւելի նուազ չափով միջոցներ ունին դարմանուելու : Մինչդեռ թոքատապ կամ թոքերու բորբոքումը (Phtisie) զէթ ցարդ ո՛չ մի հնարաւոր միջոց չէ դանուած դարմանուելու :

Այս գործարանաց զլիաւոր հիւանդութիւններն թուքախտը, (Phtisie) Հազ (Toux) Հարբուխ կամ Սալըմ (Jetage) Չայն կերկերումն և Շնջառեարութեան խանգարումը :

ԹՈՒՐԱՆՏ (PHTISIE)

Թէ մարդոց և թէ կենդանեաց մօտ ամենէն ծանր և վտանգաւոր հիւանդութիւն է ։ սա ոչ միայն խիստ փոխադրական՝ այլ և ժառանգական է ։ Ընդունուած է որ թոքախտը Քօխի « բասիլ » ների անուան տակ՝ կաթի միջոցաւ , կովէն կանցնի մարդուն , զրա համար խիստ յանձնարարելի է՝ որ կաթը՝ երբէք՝ մանաւանդ մեծ քաղաքներում , հում չլսմել ։ Այս հիւանդութեան նշաններն են զլիստ որարար հազ և չտիազանց նիհարանալ , ուժէ խնկալ , մարմինն կը կորսնցնէ իւր բնական վաղնութիւնը և մտղեր կը փէտանան և կը ցլուին ։

ԴԱՐՄԱՆ

Մանաւոր դարմանում գիտար է սահմանել թոքախտաւոր կենդանիի համար , որքան կարելի է առանձին մեղմ չոր , տաք և մաքուր օդի մէջ պահել կենդանին , Մտունդը վերին ստախճանի մաքրել ու փափկացնել ։ Խաղաղ և մաքուր ու մնդարար վիճակը շատ անգամ կը փրկէ թեթև վարակուած կենդանիներին ։

Տեսնուած են կալեր , որ թոքախտաւորի նշաններ ցոյց տալէն յետոյ , կրկին չնորձքով խնամքի տակ տանեակ տարինոր կապրին , աւելին հետաքրքիր այնպէս է որ այս տեսակ կալերը աւելի կաթնատու են քան միւս տառլները ։ Բայց այս հիւանդութեան ծանր պարագային՝ նպատակա յարմար է , կենդանիի նիհարանալէ առաջ մաախճաովն լանձնել ։

ՀԱՁ (TOUX)

